ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՁԱՒԱԿԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅՆ ԲՈՒԼԳԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Հայոց հաւատքի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով եւ ուրախութեամբ ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ձեզ՝ Բուլղարիայի Հայոց թեմի հաւատաւոր զաւակներիդ, որ այս տարի յատուկ հանդիսութիւններով տօնախմբում էք թեմի 145-ամեայ նշանակալի յոբելեանը:

Աստուծոյ օրհնութեան եւ խնամքի ներքոյ Բուլղարիոյ աւանդաշատ երկրում հարիւր քառասունհինգ տարիներ առաջ հիմնադրուեց Տիրախնամ թեմը, եւ աճեց ու զօրացաւ հայ համայնքը: Վայելելով պետութեան բարեհաճութիւնն ու բուլղար ժողովրդի եղբայրական սէրը՝ հայորդիք յաջողութեամբ կազմակերպեցին հոգեւոր ու ազգային կեանքը: Մեր ժողովրդի զաւակները նախանձախնդիր ոգով ու ստեղծագործ ընթացքով գնահատելի աւանդ բերեցին Բուլղարիայի բարգաւաճմանն ու առաջընթացին՝ պետական ու հասարակական, գիտական ու մշակութային կեանքին: Այդ մասին են վկայում դեռեւս հինգերորդ դարից սկսած հայերի բարերար ներկայութիւնը Բալկաններում, Բուլղարիայի հայ գրչութեան պատմական կենտրոնները, տնտեսութեան, արդիւնաբերութեան ու արհեստների մէջ հայոց մեծ ձեռքբերումները, երկրի պաշտպանութեան եւ ազատագրութեան համար մղուող մարտերում հայորդիների հերոսական մաքառումները բուլղար եղբայրների հետ միասին:

Փառք եւ գոհութիւն ենք մատուցում Աստծուն, որ այսօր Բուլղարիայի հայ համայնքը վերազարթօնք է ապրում: Եկեղեցամարտ հասարակարգի դժուարին տարիներից յետոյ քաջեռանդ գործունէութեամբ բուլղարահայ համայնքը ջանքեր է ներդնում նոր ձեռքբերումներով վերակերտելու ազգային-եկեղեցական կեանքը: Գլխաւորութեամբ Բուլղարիայի Հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Արգար վարդապետ Յովակիմեանի՝ արդիւնաւորուում է սպասաւորութիւնը հոգեւոր հովիւների:

Սիրելիներ, Մենք բարձր ենք գնահատում ձեր ազնիւ եւ հաւատաւոր ընթացքը, եկեղեցանուէր ու ազգաշահ գործերը՝ ի խնդիր համայնքի առաջընթացի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան: Դուք ձեր բարեպաշտ կեանքով ու գործերով ամրապնդում էք նաեւ դարաւոր բարեկամութիւնը հայ եւ բուլղար ժողովուրդների, նպաստ բերում Հայաստանի եւ Բուլղարիայի համագործակցութեանն ու ներկայիս առաւել արդիւնաւորուող փոխյարաբերութիւններին: Գոհունակ սրտով Մեր գնահատանքն ենք բերում Բուլղարիայի Հանրապետութեան իշխանութիւններին, որոնց աջակցութեան ու բարեացակամ վերաբերմունքի շնորհիւ հայ համայնքը նոր իրագործումներով զօրացնում է ազգային-եկեղեցական իր կեանքը:

Աղօթում ենք առ Աստուած, որ խաղաղութեան մէջ պահպանի Բուլղարիան եւ օրհ-

նի նրա ապրուածասէր ժողովրդի ջանքերը յանուն իր բարօր ու երջանիկ կեանքի: Թող Ամենակալ Տէրը նաեւ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ միշտ շէն ու պայծառ պահպանի Բուլղարիայի Հայոց թեմը եւ պարգեւի ձեզ ամենքիդ քաջառողջ կեանքի երկար օրեր, եկեղեցանուէր ու հայրենաշէն գործոց յաջողութիւններ:

«Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13-14):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 25-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1375